

**ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ:**

**Միջազգային չափանիշների և ներպետական օրենսդրության
վերլուծություն**

Ուսումնասիրությունը կատարվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների»

ՀԿ կողմից 2019 թվականին:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿԱՐԱՏԵՎ ԵՎ ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պայմանավորված իր բնույթով՝ երկարաժամկետ ազատազրկումը վեր է բարձրացնում մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք հիմնախնդիրներ, որոնք անմիջականորեն կապված են քրեական արդարադատության համակարգի հետ: Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձինք ազատազրկվում են՝ հաշվի առնելով նրանց վտանգավորությունը հանրության համար: Հետևաբար երկարաժամկետ ազատազրկված դատապարտյալները ավելի խիստ պայմաններով են պատիժը կրում, ինչը մի կողմից արդարացված է քրեական արդարադատության համակարգում, մյուս կողմից՝ իրենում մարդու իրավունքների խախտումների մի շարք վտանգներ է պարունակում: Ընդ որում՝ պատժի խստությունը կախված է ոչ միայն դրա ժամկետից, այլ նաև կրման պայմաններից: Արդյունքում, պատժի կրման ընթացքում մարդու իրավունքների համար հնարավոր վտանգները բացասաբար են անդրադառնում ինչպես կոնկրետ անձի, այնպես էլ պատժի նպատակների իրագործման վրա: Մասնավորապես երկարաժամկետ ազատազրկումը անխուսափելիորեն հանգեցնում է ազատազրկվածի ֆիզիկական, զգայական ու մտավոր կարողությունների խաթարման: Այն դեպքում, երբ երկարաժամկետ ազատազրկումը ուղեկցվում է պատժի պլանավորման ու հոգեբանական միջամտության ծրագրերի բացակայությամբ, հասարակություն վերադարձն ու վերաառցիալականացումը դառնում են գրեթե անհնար:

Նման իրավիճակը պահանջում է երկար ժամկետով պատժի կրման, պատիժ կրողների համար իրենց կարգավիճակից բխող երաշխիքների, պատժի կրման ժամկետը նվազեցնելու ու ռեժիմը փոխելու օրենսդրական հիմքերի հստակ ամրագրում, ինչպես



ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

նաև պրակտիկայում այդ ամենը կիրառելի դարձնելու արդյունավետ մեխանիզմների առկայություն:

Վերոնշյալը իր ուրույն արտացոլումն է գտել ՀՀ իրականության մեջ. մի կողմից՝ առկա են բացեր և հակասություններ օրենսդրության մեջ, ինչը ինքնին բացասաբար է ազդում դատապարտյալների վրա, մյուս կողմից՝ առկա են օրենսդրական երաշխիքներ, որոնք իրենց կարգավորմամբ խնդրահարույց չեն, սակայն պրակտիկայում չեն կիրառվում:

Սույն ուսումնասիրության մեջ կներկայացվեն երկարաժամկետ ազատազրկվածների, մասնավորապես կենտրոնանալով ցմահ ազատազրկվածների վրա, իրավական կարգավիճակի վերաբերյալ միջազգային ստանդարտներն ու պատժի արդյունավետ կրման երաշխիքները, որոնք ՀՀ օրենսդրության ու պրակտիկայի համեմատության մեջ կարտացոլեն նաև առկա խնդիրները՝ դրանց լուծման հնարավոր առաջարկներով:

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԱԶԿՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Ո՞րն է համարվում երկարաժամկետ ազատազրկում

Մինչ երկարաժամկետ ազատազրկման առանձնահատկություններն ու բացասական հետևանքները հասկանալը՝ պետք է պարզել՝ որն է համարվում երկարաժամկետ ազատազրկում, ինչը միանշանակ չէ՝ հաշվի առնելով երկրների քրեական պատիժների համակարգի ու պատժաչափերի տարբերությունները: Երկարաժամկետ ազատազրկման կոնկրետ չափը որոշելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, թե պատժի կրման որ պահից են անձի մոտ առաջանում պատժի երկարության հետ կապված խնդիրներ:

Համաձայն ԵԽ ստանդարտների, որոնք ընդունվել են՝ հիմք ընդունելով բանտերում իրականացված ուսումնասիրություններն ու առանձին երկրների պատժի



ԻՐԱԿՈՒՆՔԵՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

համակարգերը՝ երկար ժամկետով ազատազրկում է համարվում 5 տարի և ավելի ժամկետով ազատազրկումը, ինչի մեջ մտնում է նաև ցմահ ազատազրկումը¹:

ՄԱԿ-ի՝ Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների համաձայն՝ ազատազրկում պատժատեսակը կարող է կիրառվել հասարակությունը պաշտպանելու նպատակով, այնքանով, որքանով որ նշանակված ազատազրկման չափը օգտագործվում է, որպեսզի *դատապարտյալը հասարակություն վերադառնալուց հետո ոչ միայն ցանկանա, այլ նաև ունակ լինի օրինապահ քաղաքացու կյանք վարել*²: Հետևաբար երկարատև ազատազրկման դեպքում պարտադիր չէ, որ պատժի նպատակներն իրականացվեն չափազանց երկար ժամանակահատվածում:

Եվրոպայի Խորհրդի շրջանակներում մահապատժի արգելքից հետո ցմահ ազատազրկումը որոշ անդամ երկրներում ամենախիստ պատժատեսակն է դարձել: Խիստ պատժատեսակների համար նախատեսված ժամկետները, սակայն, տարբեր են: ԵՄ անդամ երկրների մեծամասնությունում գործում է ցմահ ազատազրկումը, ինչի համար նախատեսված է նաև պատժի վերանայում և ազատ արձակում:

Ընդհանուր առմամբ ցմահ ազատազրկումը կիրառվում է երեք եղանակով:

Առաջին դեպքում ցմահ ազատազրկումը պարտադիր պատժատեսակ է, որը կիրառվում է առանձնապես ծանր հանցագործության դեպքում, և հատկապես հաշվի առնելով այն, որ ցմահ ազատազրկումը փոխարինել է մահապատիժ պատժատեսակին: Մի շարք երկրներում, որտեղ մահապատիժը վերացվել է, նշանակված մահապատիժ պատժատեսակը մեխանիկորեն փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

Երկրորդ դեպքում ցմահ ազատազրկումը պարտադիր պատժատեսակ չէ, և դրա ընտրությունը թողնված է դատական մարմինների հայեցողությանը: Օրինակ՝ Եվրոպական մի շարք երկրներում սպանության դեպքում ցմահ ազատազրկումը միակ պատժատեսակը չէ: Եվ վերջին դեպքում ցմահ ազատազրկում պատժատեսակը կիրառվում է, երբ վերջինս փոխարինում է /որպես պատժի մեղմացում/ մահապատիժն³:

Եվ երրորդը՝ Եվրոպայում ներկայումս կա 9 երկիր, ինչպիսիք են Անդորրան, Բոսնիա և Հերցեգովինան, Մոնտենեգրոն, Սան Մարինոն, Սերբիան, Նորվեգիան,

¹ Council of Europe, European Committee on crime problems, Treatment of long-term prisoners

² UN Standard Minimum Rules for the Treatment of Prisoners, Rule 58

³ UN Office at Vienna, Crime Prevention and Criminal Justice Branch, *Life Imprisonment*, 1994



ԻՐԱԿՈՒՆՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պորտուգալիան, Իսպանիան և Խորվաթիան, որտեղ ցմահ ազատազրկում պատժատեսակը նախատեսված չէ⁴: Այս երկրներում պատժի առավելագույն ժամկետը տարբեր է. Նորվեգիայում, օրինակ, 21 տարի, Բոսնիա և Հերցեգովինայում՝ 45: Խորվաթիայում հանցագործությունների համակցության դեպքում կարող է ընդհուպ մինչև 50 տարի ժամկետով պատիժ նշանակվել:

Չնայած պատժատեսակների ժամկետների հարցում գործող տարբեր մոտեցումներին՝ քրեական արդարադատության որդեգրած այս կամ այն քաղաքականության հետևանքները ակնհայտ են: Մասնավորապես որոշակի ժամկետով պատիժ կրելուց հետո ազատ արձակվելու հնարավորությունը խրախուսում է ազատման պատրաստվելը՝ դրական վարքագծի խրախուսմամբ, իսկ ահա ցմահ ազատազրկման պարագայում նման հնարավորության բացակայությունը անձին պատրաստում է բանտում մահվան⁵:

Չնայած այն հանգամանքին, որ ԵԽ անդամ երկրների մեծ մասի քրեական համակարգերը նախատեսում են ցմահ ազատազրկումը, այնուամենայնիվ նշանակված ցմահ պատիժը չի նշանակում ամբողջ կյանքը բանտում անցկացում: Այդ երկրները նախատեսում են նշանակված պատժի վերանայման հնարավորություն՝ պայմաններ ստեղծելով ուղղվելու ու պատժի կրումից ազատվելու համար:

Երկարատև ազատազրկման հետևանքները դատապարտյալի վրա

Ընդունված փաստ է, որ երկարաժամկետ ազատազրկումը բացասական հետևանքներ է թողնում անձի վրա: Թերևս ամենից լուրջ խնդիրը կապված է պատժի անորոշության հետ՝ երբ և ինչպես դատապարտյալը կարող է պատժի հետագա կրումից ազատ արձակվել, ինչով պայմանավորված՝ անհրաժեշտ է ինչպես օրենսդրության մեջ, այնպես էլ պրակտիկայում ունենալ սկզբունքներ ու մեխանիզմներ, որոնք հնարավորինս կկանխեն այդ բացասական հետևանքները դատապարտյալների նկատմամբ: Հետևաբար, անհրաժեշտ է հասկանալ, թե որոնք են այդ բացասական հետևանքները,

⁴ European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment, Actual/real life sentences, 2007

⁵ Explanatory Memorandum, CM (2003) 109 Addendum 3 par.11



ԻՐԱԿՈՒԷՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որոնք են այդ բացասական հետևանքները խթանող պատճառներն ու պայմանները, որոնք հնարավոր է նույնիսկ կործանարար ազդեցություն ունենան ազատազրկվածների համար:

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 4-6 տարի ժամկետով ազատազրկումից հետո պատիժ կրող անձի մոտ ձևավորվում են հոգեբանական-ֆունկցիոնալ համախտանիշներ, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները: Նման համախտանիշները մասնավորապես հանգեցնում են **էմոցիոնալ խանգարումների**, ընկալունակության խանգարումների, **մտածողության խաթարման**, **կյանքի ռեգրեսիվ ընկալման մոտեցումների** և ամենակարևորը՝ **սոցիալական շփումներ** ձևավորելու խնդիրների: Այս ամենը կարող է ընդգծված տեսք ունենալ կամ ընդհակառակը՝ ավելի նվազ արտահայտվել՝ կախված անձի տարիքից, պատժի ժամկետից և պատժի կրման պայմաններից: Թերևս ամենակարևոր գործոնը, որն ազդում է **վերոնշյալ սինդրոմների ձևավորման վրա**, երկար ժամկետով պատիժ կրելու հանգամանքն է, որը բացատրվում է հետևյալ կերպ՝ **ինչքան երկար է պատիժը, այնքան ավելի հավանական է հոգեբանական խնդիրների ձևավորումը, ինչը կասկածի տակ է դնում պատժի նպատակների, մասնավորապես անձի ռեաբիլիտացիայի և ուղղման իրագործման հավանականությունը**⁶:

Ընդհանուր առմամբ երկարաժամկետ ազատազրկման բացասական հետևանքները կախված են հետևյալ հանգամանքներից.

- Դատապարտյալի անհատական հատկանիշները, սոցիալական վարքագիծը, սոցիալական խմբի պատկանելությունը և այլն,
- Դատապարտյալի կողմից արտաքին աշխարհի հետ կապի պահպանման հնարավորությունը, վարքագծի դրական փոփոխության հավանականությունը,
- Տվյալ քրեակատարողական հիմնարկի խստության մակարդակը:

Հատկանշական է, որ երկար ժամանակով ազատազրկման հետևանքները հոգեբանական և սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքում տարբեր կերպ են ներկայացվում: **Հոգեբանների** կողմից իրականացված ուսումնասիրությունները, որոնք հիմնվել են ստանդարտացված թեստերի և ընթացակարգերի վրա, դիտարկման առարկա են դարձրել անձի ճանաչողական կարողությունները, հիշողությունը, հոգեկանի գործունեությունը և այլն: Իրենց հերթին **սոցիոլոգիական**

⁶ Treatment of long-term prisoners considered from medical and psychiatric points of view, by Dr W. Sluga, (DPC/CEPC XXV (73) 1)



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հետազոտությունները այլ բնույթի են եղել և հանգել են տարբերվող արդյունքների: Վերջին 50 տարիների ընթացքում իրականացված սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս նշել, որ երկարաժամկետ ազատազրկումը անձի մոտ ուժեղացնում է քրեական վարքագծին բնորոշ հատկանիշները և ավելի մոտ է դարձնում քրեական կյանքին⁷:

Սա բացատրվում է նրանով, որ երկարաժամկետ ազատազրկման բացասական սոցիոլոգիական հետևանքները կապված են մի շարք հիմնարար իրավունքների սահմանափակումների հետ: Հիմնարար իրավունքների սահմանափակումը թեպետ արդարացված է պատժի քաղաքականության շրջանակներում, որոշ ժամանակ անց հանգեցնում է մեկուսացման, անձնական պատասխանատվության կորստի և քրեակատարողական հիմնարկից կախվածության: Նման հետևանքները բնորոշ են նույնիսկ կարճ ժամկետով ազատազրկվածներին, սակայն դրանք կարող են ուժգնանալ երկարաժամկետ պատժի կրման ընթացքում՝ հատկապես ցմահ ազատազրկվածների պարագայում: Սա իր հերթին հասկանալու համար պետք է ուսումնասիրել ցմահ ազատազրկման փիլիսոփայությունը: Նախ՝ իրենց սոցիալական միջավայրից կտրված անձինք կորցնում են արտաքին կապերը: Ընտանիքի և ընկերների հետ կապի կորուստը թերևս ամենալուրջ դրսևորումն է: Իսկ վարքագծի որոշ օրինաչափություններ, որոնք կարող են առաջ գալ նման պայմաններում, ավելի մոտ են ագրեսիային ու բռնությանը:

Հետևաբար երկարաժամկետ ազատազրկումը անձի դանդաղ դեֆորմացումն է: Բացի այդ, տեսության մեջ ընդունված է ասել նաև, որ ցմահ ազատազրկվածները մոդելային դատապարտյալներ են, որոնք ավելի երկար ժամանակ ունեն բանտային կյանքին ադապտացվելու համար: Ադապտացումը միգուցե ցանկալի արդյունք հանդիսանա բանտի ադմինիստրացիայի համար, քանի որ ադապտացված դատապարտյալը ավելի հեշտ է ենթարկվում բանտային կանոններին: Սակայն այս դեպքում տեղի է ունենում հասարակությունից ու սոցիալական կյանքից կտրում, ինչը հնարավոր է անվերականգնելի լինի: Սրան գումարվում է նաև այն հանգամանքը, որ ցմահ ազատազրկվածները հասարակության կողմից ավելի բացասական են ընդունվում,

⁷ European Committee on Crime Problems, Treatment of long-term prisoners, Draft of the General Report on the treatment of long-term prisoners, CoE, 1975



ԻՐԱԿՈՒՆՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

նրանց ռիսկայնությունը ավելի բարձր է, և նրանց նկատմամբ մեղմ դրսևորումները քիչ հավանական են⁸:

ԵՆ Խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեի Ստանդարտները երկարաժամկետ ազատազրկման վերաբերյալ

Ցմահ և երկարաժամկետ ազատազրկվածների հարցում ԽԿԿ հիմնական մոտեցումը հանգում է նրան, որ ցմահ ազատազրկվածները չպետք է ազատ արձակվելու հույսից զրկված լինեն:

Սա բացատրվում է այն հանգամանքով, որ.

1. Ոչ ոք կոնկրետ չի կարող ասել, որ ցմահ ազատազրկվածը հասարակության համար միշտ է վտանգավոր,
2. Անձինք, ովքեր ազատ արձակվելու հույս չունեն, վարքի կառավարման և բանտի ադմինիստրացիայի հետ համագործակցելու համար լուրջ խնդիրներ կարող են ստեղծել: Սա այն իմաստով, որ դրական վարքագծի ցուցաբերումը և պատժի կազմակերպման անհատական պլանի մշակումը որևէ դրական հեռանկար չեն ունենա⁹:

Խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեի համաձայն՝ երկարաժամկետ կամ ցմահ ազատազրկման ամենաբացասական հետևանքներից մեկը անձի մոտ հակասոցիալական մոտեցման ձևավորումն է: Ավելին, ազատազրկվածների մոտ ձևավորում են հոգեբանական տարբեր բնույթի խախտումներ, ներառյալ՝ ինքնազնահատականի կորուստ, սոցիալական ունակությունների վատթարացում և այլն: Նման կերպ ազատազրկվածները հեռանում են հասարակությունից և ազատ արձակվելու դեպքում լուրջ խնդիրների հանդիպում¹⁰:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հաստատվել է, որ վտանգավորությունը հանցանք կատարած անձի համար **մշտական բնութագրիչ չէ**¹¹: Այդ իսկ պատճառով անձի վտանգավորության հարցը քննարկելիս անհրաժեշտ է ստուգել՝ արդյոք հանցանք կատարելու պահին նրան բնորոշող վտանգավորության գործոնը

⁸ W.R.T. Palmer, Programming for long-term inmates: a new perspective, Canadian Journal of Criminology, 1984, vol 26

⁹ European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment, Actual/real life sentences, Memorandum prepared by Mr Jorgen Worsaae RASMUSSEN, 2007

¹⁰ European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment, 2006, 33. *Life-sentenced and other long-term prisoners*

¹¹ Judgment X v. the United Kingdom of 5 November 1981; Judgment Weeks v. the United Kingdom of 2 March 1987; Judgment Thynne, Wilson and Gunnell v. the United Kingdom of 25 October 1990.



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

շարունակական է, թե՛ ոչ: Նույն մոտեցումը գործում է նաև հանցածին կարիքների գնահատման դեպքում, քանի որ երկուսի պարագայում էլ ժամանակի ընթացքում հնարավոր են փոփոխություններ: Ինչը նշանակում է, որ որոշակի ժամանակահատվածում անձի ռիսկայնության գնահատականը հնարավոր է չհամապատասխանի մեկ այլ ժամանակահատվածում նրա մոտ առկա ռիսկայնության աստիճանին: Հետևաբար անհրաժեշտ է որոշակի պարբերականությամբ գնահատել անձի ռիսկայնության աստիճանը: **Ավելին, քրեական արդարադատության տարբեր համակարգերի քննադատների կողմից նշվում է նաև, որ հանցագործները պատժվում են այն հանցանքների համար, որոնք նրանք արդեն կատարել են, այլ ոչ թե այն հավանական հանցագործությունների համար, որոնք հնարավոր է ինչ-որ մի օր կատարվեն դատապարտված անձի կողմից:**

Երկրորդ կետը հիմնավորվում է նրանով, որ առանց ազատ արձակվելու հույսի ցմահ դատապարտյալը բանտի դինամիկ անվտանգությանը քիչ է ուշադրություն դարձնում, քանի որ բանտի վարչակազմի հիմնական խնդիրներից մեկը բանտում վերահսկողության որոշակի մակարդակ պահպանելն է որպես անվտանգության երաշխիք: Իսկ դինամիկ անվտանգությունը նշանակում է նաև դատապարտյալների հետ դրական փոխհարաբերությունների ձևավորում, ինչը ադմինիստրացիայի վրա լրացուցիչ պարտականություններ է դնում. մասնավորապես ազատազրկվածներից յուրաքանչյուրին անհատական մոտեցում ցույց տալ, օժանդակել անձնական խնդիրների հարցում, բովանդակային խոսակցությունների վարում և այլն: Այս գործընթացում եթե դատապարտյալը գիտակցի, որ դրական վարքագիծը իր համար որևէ արդյունք չի տա, ապա դինամիկ անվտանգության ապահովումը կդառնա անհնար:

Բացասական հետևանքները կանխելու միջոցները

Ներկայացվածը ցույց է տալիս, որ երկարաժամկետ ազատազրկումը բացասական է անդրադառնում ոչ միայն անձի, այլ նաև պատժի նպատակների իրականացման վրա, ինչով պայմանավորված՝ անհրաժեշտ է քրեական արդարադատությունը կառուցել այնպիսի ծրագրերի ու համակարգերի վրա, որոնք ինչ-որ չափով նվազեցնում են այդ բացասական հետևանքները:

Նման անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ մոտեցմամբ՝ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված քրեական արդարադատությունը,



ԻՐԱԿՈՒԷՔԵՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որը հանցանք կատարած անձին պահում է բանտում մինչ կյանքի վերջ, այն դեպքում, երբ վերջինս հասարակության համար այլևս վտանգ չի ներկայացնում, չի կարող համապատասխանել ո՛չ դատապարտյալների վարվեցողության ընդունված կանոններին, ո՛չ էլ հանցագործներին հասարակություն վերաինտեգրելու նպատակին¹²:

Հետևաբար վերը ներկայացված հնարավոր խնդիրները կանխելու և բացասական հետևանքները հնարավորինս նվազեցնելու համար ազատագրկվածների համար պետք է նպատակային զբաղմունքների հնարավորություն ստեղծել՝ աշխատանք, կրթություն, սպորտով զբաղվելու հնարավորություն և այլն: Սրան զուգահեռ, պետք է մշակվեն պատժի կրման անհատական պլաններ՝ հոգեբանների և սոցիալական աշխատողների մշտական ու պատասխանատու աշխատանքի ներքո:

Կանխարգելումը լավագույնս հնարավոր է իրականացնել դատապարտյալների հետ վարվեցողության կոնկրետ ծրագրերի միջոցով: Սա ընդունված մոտեցում է դեռևս 1955 թվականից, երբ մշակվում էին դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները: Վերջիններիս համաձայն՝ դատապարտյալների հետ վարվեցողությունը պետք է ուղղված լինի դատապարտյալի մոտ սեփական անձի նկատմամբ հարգանքի բարձրացմանը և պատասխանատվության զգացմունքի բարձրացմանը՝ օգտագործելով կրթության, ազատ ժամանցի, վերապատրաստումների, սոցիալական աշխատանքների, ֆիզիկական պատրաստվածության և բարոյական արժեհամակարգի ձևավորման հնարավորությունները: Նպատակային ծրագրերը հետևաբար կարող են բազմաբնույթ լինել¹³:

Դատապարտյալների հետ վարվեցողության ծրագրերը երկակի նշանակություն ունեն: Մի կողմից՝ դրանք դատապարտյալին հնարավորություն են տալիս սեփական անձը գնահատել. արդյո՞ք վերջինս կարող է դիմագրավել անցյալի կամ ներկայի խնդիրները: Մյուս կողմից՝ բանտի վարչակազմին հնարավորություն են տալիս հասկանալ դատապարտյալի վարքագծի փոփոխությունները, բացասական ու դրական կողմերը: Յուրաքանչյուր դեպքում, սակայն, դատապարտյալը պետք է մոտիվացված լինի նման ծրագրերին մասնակցելուն և գիտակցի դրանց կարևորությունը իր կարգավիճակի փոփոխության համար:

Պատժի կրման ընթացքում ձևավորվող բացասական վարքագիծն ու հոգեբանական խանգարումները կանխելու համար պատժի առաջին իսկ օրվանից անհրաժեշտ է

¹² European Committee on Crime Problems, Treatment of Long-Term Prisoners, CoE, 1977

¹³ D. Wilson and G. Vito, Long-term inmates: special needs and management considerations, Federal Probation, 1988



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

օժանդակել անձին և օրինատացնել բանտային կյանքին: Օրինատացիան հատկապես կարևորվում է, եթե անձը շոկի կամ սթրեսի վիճակում է:

Երկարատև և ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ հսկողությունը և ինքնին պատժի կրումը պետք է հիմնվեն հետևյալ սկզբունքների վրա¹⁴

- Անհատականացում
- Նորմալիզացում/հարաբերությունների կարգավորում
- Պատասխանատվություն
- Անվտանգություն
- Սեգրեգացիայի բացառում
- Առաջընթացի ապահովում

Անհատականացման սկզբունքի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ երկար ժամկետով և ցմահ դատապարտվածները չեն տարբերվում մնացած դատապարտյալներից: Տարբերությունը կայանում է անձի տարիքի, մտավոր կարողությունների, կրթության, սոցիալական կարգավիճակի, անձնական այլ հատկանիշների մեջ, որը բնորոշ է բոլորին՝ անկախ դատապարտված լինելու, առավել ևս երկար կամ կարճ ժամկետով դատապարտված լինելու հանգամանքից: Տարբերվող հանգամանք են հանդիսանում նաև կատարված հանցանքի բնույթը, հանցանքը կատարելու ժամանակ անձին ուղեկցող հանգամանքները, նրա քրեական անցյալը, ինչով պայմանավորված՝ կարևոր և անհրաժեշտ պայման է դառնում անհատական մոտեցում ցուցաբերելն ու պատժի կրման անհատական պլան մշակելը:

Բանտային կյանքը պահանջում է, որ դատապարտյալը անցնի փոփոխության չենթարկվող որոշակի էտապներով: Նման երևույթը, հատկապես եթե տեղի է ունենում երկար ժամանակային կտրվածքով, հանգեցնում է անձի պասիվության, անօգնականության զգացողության և զրկում հասարակության մեջ բնականոն կյանքով հետագայում ապրելու կարողությունից: Սա է պատճառը, որ **նորմալիզացման/հարաբերությունների կարգավորման** սկզբունքը կարևորվում է և պայման հանդիսանում բանտային կյանքի պայմաններում հնարավորինս քաղաքացիական կյանքի երանգներ հաղորդելն ու ազատ արձակվելուն նախապատրաստվելը:

Պատասխանատվության սկզբունքը սերտորեն կապված է նորմալիզացման սկզբունքի հետ: Հասարակության մեջ՝ ազատության պայմաններում ապրելը ենթադրում է նաև որոշակի պատասխանատվության ստանձնում՝ տարբեր ոլորտներում և

¹⁴ Management by Prison Administrations of Life-sentence and other long-term prisoners, REC (2003)23, Adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 9 October 2003



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հարցերում, ինչը տեղի է ունենում բավականին հաճախ: Բանտային կյանքը ինքնին այնպիսին է, որ անձիք հիմնականում զրկված են որոշումներ կայացնելու, հետևաբար նաև պատասխանատվություն կրելու հետագա հնարավորությունից: Այսինքն՝ անձը ժամանակի ընթացքում ետ է վարժվում նաև պատասխանատվության զգացողություն ապրելուց, ինչը բացասաբար անդրադարձ կարող է ունենալ վարքագծի դրական փոփոխության վրա: Քանի որ պատասխանատվություն ստանձնելն ու հետևանքները կրելը ստիպում են մտածել մինչև կոնկրետ վարքագիծ ցուցաբերելը: Հետևաբար բանտի վարչակազմից պահանջվում է այնպիսի իրավիճակներ ստեղծել, երբ դատապարտյալները պատասխանատվություն կստանձնեն իրենց որոշակի գործողությունների համար:

Անվտանգության և ապահովության սկզբունքը պահանջում է, որ երկար ժամկետով և ցմահ դատապարտված անձանց վտանգավորության հարցը ուշադիր քննության առարկա դառնա: Հաճախ սխալ պատկեր է ստեղծվում, որ ցմահ կամ երկար ժամկետով պատիժ կրողները ավելի վտանգավոր են: Հետևաբար պետք է խորը ուսումնասիրության ենթարկել անձի՝ սեփական անձի, խցակիցների և վարչակազմի նկատմամբ հնարավոր վտանգի հավանականությունը, ինչը վերջնական արդյունքում ազդում է բանտում տիրող հսկողության, անվտանգության և դատապարտյալի համար նախատեսված ուղղիչ ծրագրերի ճիշտ ընտրության վրա:

Սեգրեգացիայի չենթարկելու սկզբունքը պահանջում է, որ երկար ժամկետով և ցմահ դատապարտվածները չառանձնացվեն մնացած դատապարտյալներից և չտարբերակվեն: Խոսքը վերաբերում է վերջիններիս վտանգավորության ռիսկը ավելի բարձր գնահատելուն և ըստ այդմ՝ նրանց դասակարգելուն: Ինչպես և ցույց է տալիս մի շարք երկրների բանտային համակարգի փորձը, ցմահ կամ երկար ժամկետով դատապարտվածները իրենց կամ իրենց կողքինների համար վտանգ չեն ներկայացնում: Իսկ եթե նման վտանգ լինում է, ապա դա կոնկրետ իրավիճակում է պատահում, ինչը հնարավոր է տեղի ունենա այլ դատապարտյալների հետ ևս: Հետևաբար ցմահ ազատազրկվածներն ու երկար ժամկետով պատիժ կրողները պետք է առանձնացվեն և մեկուսացվեն միայն այն դեպքում, երբ վտանգի հիմնավոր ռիսկեր կան:

Առաջընթացի սկզբունքը դիտարկվում է որպես անձի մտավոր ունակությունների և հոգեկան առողջության վատթարացման հիմնական դիմագրավող և կանխարգելող գործոնը: Ինչը պահանջում է, որ բանտային համակարգը հնարավորինս դրական ազդեցություն թողնի եկար ժամկետով կամ ցմահ դատապարտված անձի վարքագծի և հոգեկան առողջության պահպանման և բարելավման վրա:



ԻՐԱԿՈՒԵԼՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԺԻ ԿՐՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Երկարատև և ցմահ ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ հսկողության նպատակները չեն իրականացվի, եթե յուրաքանչյուր դատապարտվածի համար առանձին պլան չի մշակվել: Պատժի կրման պլանը լավագույնս պետք է ներկայացնի ազատագրկման իրականացման հնարավորինս արդյունավետ եղանակները: Պլանը պետք է իրենում ներառի բանտի վարչակազմի կողմից կայացված որոշումները, գործողությունները, պատժի կրման ընթացքում կիրառված միջամտությունները և ըստ այդմ՝ տվյալ դատապարտյալին արդյունավետ ծրագրեր առաջարկի: Նման պլանավորման հիմնական նպատակը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժին հարմարվելուն նպաստելն է:

ԵՆ Նախարարների կոմիտեի 2003/23 Հանձնարարականը, ելնելով երկարատև ազատագրկման բացասական հետևանքներից, սահմանում է, որ.

Երկարատև և ցմահ ազատագրկման դատապարտված անձանց պատժի կրման պլանավորումը նպատակ ունի՝

- Դիմակայել նման ազատագրկման կործանարար հետևանքներին,
- Բարձրացնել նման պատիժ կրող անձանց ազատ արձակվելու հնարավորությունը և օրինապահ կյանք վարելու հավանականությունը

Պատժի կրման պլանները իրենց հերթին պետք է հարմարեցված լինեն փոփոխվող հանգամանքներին և պայմաններին: Նման դեպքում պլանը դատապարտյալի հետ տարվող աշխատանքի հիմնական գործիքն է դառնում, որի նպատակը պատժի արդյունավետ կրումն է: Որպեսզի պատժի կրման պլանները իրատեսական լինեն, պետք է իրենցում պարունակեն կոնկրետ դատապարտյալի վերաբերյալ կարիքների ու ռիսկերի գնահատման արդյունքները: Պատժի կրման ճիշտ պլանավորման շնորհիվ կոնկրետ անձի նկատմամբ նշանակված պատժատեսակն ու հսկողության միջոցները ժամանակի ընթացքում փոփոխվում են՝ խստից անցում կատարելով հնարավորինս մեղմի: Վերջնական արդյունքը պետք է լինի այն, որ պատժի կրման վերջին փուլում դատապարտյալը պատիժը կրի նվազագույնս խիստ պայմաններում:

Պատժի կրման պլանավորման նպատակներից է նաև բացահայտել վարքի անհրաժեշտ միջամտության եղանակները, որոնք կնվազեցնեն տվյալ անձի կրկնահանցագործության ռիսկերը: Վարքի միջամտությունը պետք է լինի այնպիսին, որ



ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

անձը գիտակցի իր անօրինական վարքագծի հետևանքներն ու միջոցներ գտնի դրանք վերացնելու համար: Այսինքն՝ պատժի ճիշտ պլանավորումը ազատագրկման ընթացքում ժամանակը արդյունավետ օգտագործելու հիմնաքարը պետք է հանդիսանա: Այն պետք է ներառի բոլոր ոլորտները՝ աշխատանք, վերապատրաստումներ, զբաղվածության այլ եղանակներ, կրթություն, ժամանցի կազմակերպում և այլն:

Անձի կարիքների և ռիսկերի գնահատման վրա հիմնված պատժի պլանավորումը պետք է կազմվի բանտ մուտք գործելուց անմիջապես հետո, ինչից հետո ակտիվ քայլեր պետք է ձեռնարկել նրան ադապտացնելու՝ իրական պայմանների ու հնարավորությունների և վերջինիս կարիքների ու ցանկությունների միջև լավագույնս կոմպրոմիսի հասնելու միջոցով: Ինչը նշանակում է, որ պատժի պլանավորումը պետք է պարբերաբար փոփոխվի:

ՌԻՍԿԵՐԻ և ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պատժի կրման պլանը և երկարատև ու ցմահ դատապարտվածների վերահսկողությունը դրական արդյունքի չեն հասցնի, եթե կոնկրետ անձի ռիսկերի գնահատում չի կատարվել: Ռիսկերը կարող են բազմաբնույթ լինել՝ սեփական անձի վնասում, խցակիցների և այլ դատապարտյալների վնասում, բանտի աշխատակիցների նկատմամբ վտանգ, վտանգ հասարակությանը փախուստի կամ ազատ արձակվելու դեպքում:

Բացի ռիսկերի գնահատումից՝ պետք է ուսումնասիրել և պարզել նաև կոնկրետ վարքագծի դրսևորումները, որոնք հանգեցնում են քրեածին գործողությունների: Նման կարիքների գնահատումը հետևաբար հանդիսանում է քրեածին կարիքների գնահատում:

Ընդհանուր կանոնի համաձայն **յուրաքանչյուր միտք կամ զգացողություն, որը կապված է քրեական վարքագծի հետ, համարվում է քրեածին կարիք**: Վերջիններս հանցանք կատարելու հիմնական աղբյուրներն են: Հետևաբար բանտի վարչակազմը պետք է քայլեր ձեռնարկի դրանք բացահայտելու և այդ մտքերն ու զգացողությունները փոխելու ուղղությամբ:



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրեաձին կարիքները բացահայտող լավագույն ծրագրերը հոգեբանական ճանաչողական բնույթի են, որոնց միջոցով դատապարտյալները գիտակցում են իրենց վարքագծի մտոհիվներն ու հետևանքները:

Կարիքների և ռիսկերի գնահատման արդյունավետ գործիքները հիմնվում են նաև անձի անցյալի որոշակի դրվագների վրա: Մասնավորապես հաշվի են առնվում նախկինում փախուստի դիմած լինելու հանգամանքը, խախտումները, դատվածության թիվը և այլն: Վերջիններս, որպես կոնկրետ անձի կյանքի պատմություն, ֆիքսված փաստեր են, որոնք փոփոխության ենթակա չեն: Սրան զուգահեռ, սակայն, կան նաև ռիսկի գնահատման դինամիկ գործիքներ, որոնք ժամանակի ընթացքում ենթարկվում են փոփոխության: Դինամիկ գործիքները վերաբերում են, օրինակ, թմրամիջոցների կամ ալկոհոլի օգտագործման և/կամ կախվածություն ունենալու հանգամանքին, կրթության մակարդակին, ամուսնական կարգավիճակին, մտավոր առողջության մակարդակին, կատարված հանցանքի նկատմամբ վերաբերմունքին և այլն:

Միննույն ժամանակ պետք է ելնել այն ընդունված մոտեցումից, որ ռիսկի գնահատումը որոշակի սահմանափակումներ ունի: Ռիսկերի գնահատումը երբեք չի կարող կոնկրետ կանխատեսել գնահատման հետևանքները: Գնահատումը ցույց է տալիս հավանականություն և ոչ թե կոնկրետ հետևանք ապագայի համար: Հետևաբար եթե ընդհանուր գնահատման արդյունքում պարզ է դարձել, որ որոշակի խումբ դատապարտյալների 80%-ը նոր հանցանք կատարելու հավանականություն ունեն, ապա հնարավոր չէ ասել՝ կոնկրետ անձը մտնում է այդ 80%-ի մեջ, թե 20%-ի, որի կրկնահանգագործության հավանականությունը մինիմալ է: Նման մոտեցումը ցույց է տալիս պրակտիկայում ռիսկերի գնահատման առնչությամբ առկա խնդիրները, ինչը որոշում կայացնելիս պահանջում է կոնկրետ անձի ռիսկերի մանրակրկիտ ուսումնասիրություն:

Բացի պատժի պլանավորումից՝ կարևորվում են նաև պատժի կրման ընթացքում դատապարտյալին անհրաժեշտ և հասանելի որոշակի երաշխիքներ: Այդ երաշխիքները կապված են արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու հնարավորությանը, կրթության, զբաղմունքի ու աշխատանքի հասանելիության հնարավորությանը ու իրենց կարգավիճակի փոփոխության օրենսդրական երաշխիքներին: Նման հնարավորությունները արդյունավետ իրագործվելու դեպքում ունակ են հնարավորինս նվազեցնել երկարատև ազատազրկման բացասական հետևանքներն ու նպաստել պատժի նպատակների իրագործմանը:



ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Այդպիսի երաշխիքների մեջ են մտնում՝

Արտաքին աշխարհի հետ կապի պահպանում

Երկարատև ժամկետով և ցմահ ազատազրկումը բացասական են ազդում հատկապես դատապարտյալների ընտանեկան կապերի պահպանման վրա: Մինչդեռ անձի ընտանեկան և ընկերական հարաբերությունների պահպանումը նրանց կայուն էմոցիոնալ համակարգի հիմնաքարն են հանդիսանում: Ընտանեկան կապերի կտրումը անձի մտավոր առողջության համար լուրջ վտանգներ է պարունակում, ինչը բացասաբար կանդադառնա նաև պատժի կրման բնականոն ընթացքի ապահովման համար:

Հետևաբար քայլեր պետք է ձեռնարկել, որպեսզի նման կապերը պահպանվեն: Սա հնարավոր է իրականացնել նախ և առաջ տեսակցությունների միջոցով, նամակագրություն վարելու և հեռախոսազանգեր կատարելու հնարավորությամբ: Առանձնակի կարևորվում են հաճախակի կարճատև տեսակցություններն ու երկարատև տեսակցությունները: Ընտանեկան կապերը պահպանելու համար անհրաժեշտ է տեսակցություններ կատարելը հեշտացնել հարազատների համար, ինչը պահանջում է, որ դատապարտյալը իր բնակավայրին հնարավորինս մոտ պատիժ կրի: Այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նամակագրության կամ հեռախոսազանգերի միջոցով նախապատրաստվում է նոր հանցագործություն, կապի միջոցները կարող են վերահսկվել: Այս դեպքում, սակայն, դատապարտյալները պետք է տեղեկացված լինեն հսկողության հնարավորության մասին:

Կրթության, աշխատանքի և մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություն

Եվրոպական բանտային կանոնները պահանջում են, որ դատապարտյալները կրթական ծրագրերի հասանելիության, աշխատանքի, ազատ ժամանակը արդյունավետ անցկացնելու, մշակութային կյանքին հաղորդակից լինելու հնարավորություն ունենան¹⁵:

Կրթական ծրագրերը պետք է հնարավորինս մատչելի լինեն և դատապարտյալների կարիքներին համապատասխանեն: Կրթություն ստանալու հնարավորությունը դատապարտյալի մոտ բարելավում է սոցիալական

¹⁵ European Prison Rules, Rules 28.1, 27.6, 26.1



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

վերախնտեգրման նախադրյալները, վերախնաստավորում բարոյական արժեքներն ու աշխարհայացքը¹⁶:

Աշխատանքի հնարավորությունը պատիժը կրելիս պետք է դիտարկվի որպես խրախուսում և ոչ թե պատժի մաս, ինչով պայմանավորված՝ բանտային վարչակազմը պետք է արդյունավետ աշխատանքի հնարավորություններ ընձեռի դատապարտյալներին:

Արձակուրդի հնարավորություն

Արտաքին կապի պահպանման եղանակներից է արձակուրդի տրամադրումը, որը կարող է լինել շատ կարճ ժամանակով: Նման պրակտիկա ոչ բոլոր երկրներում է գործում: Սրա իմաստը կայանում է նրանում, որ ինչպես երկարաժամկետ, այնպես էլ ցմահ դատապարտյալը հնարավորություն ստանա մի քանի ժամով հսկիչների հսկողությամբ դուրս գալ բանտից: Արձակուրդը տարբեր նպատակներով կարող է լինել՝ ֆուտբոլային խաղի դիտում, մշակութային կյանքին հաղորդակցում և այլն:

Նման մոտեցման նպատակը դատապարտյալին արտաքին կյանքի կոչելն է և վերադարձին նպաստելը, որպեսզի բանտի ներսում արտաքին կյանքի հետ կապերը ի սպառ չոչնչանան: Սա իհարկե հնարավոր է իրականացնել՝ պատժի որոշակի ժամկետ կրելուց հետո և անպայմանորեն կոնկրետ անձի առանձնահատկությունները հաշվի առնելով¹⁷:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորություն

Պայմանական վաղաժամկետ ազատումը դատապարտյալի պատժի հետագա կրումից ազատումն է՝ անհատական պայմանների հետազոտման ներքո¹⁸:

Դատապարտյալների վերաբերյալ գոյություն ունեցող բոլոր մոտեցումներն ու առկա սկզբունքները անխտիր կերպով վերաբերում են ցմահ ազատազրկվածներին: Ցմահ ազատազրկվածները պետք է օգտվեն այն բոլոր հնարավորություններից, որոնք նախատեսված են մնացած բոլոր դատապարտյալների համար: Ցմահ ազատազրկվածների պատժի կրումը պետք է կազմակերպվի՝ հնարավոր ազատ արձակման և հասարակություն վերադառնալու ակնկալիքով:

¹⁶ European Prison Rules, Rule 77

¹⁷ Recommendation No. R (82) 16 on prison leave

¹⁸ Council of Europe Rec(2003)22 on Early Conditional Release



ԻՐԱԿՈՒԵԼՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նույնիսկ պոտենցիալ վտանգավոր դատապարտյալները կարող են պատժի հետագա կրումից ազատ արձակվել և հասարակություն վերադառնալ հսկողության ներքո: Սոսկ այն հանգամանքը, որ անձը ցմահ ազատազրկման է դատապարտվել, չի կարող հիմք հանդիսանալ ցմահ ազատազրկվածներին պատժից ազատման երաշխիքներից զրկելու համար: Որպես կանոն ցմահ ազատազրկվածները հանրության կողմից ընկալվում են որպես ավելի վտանգավոր խումբ, ինչը հաճախ սխալ է: Մի շարք բանտային վարչակազմերի կողմից ներկայացված փորձը ցույց է տալիս, որ ցմահ ազատազրկվածները ավելի քիչ վտանգ են ներկայացնում իրենցից և ցուցաբերում են կայուն ու վստահելի վարքագիծ¹⁹: Ազատման հարցը, սակայն, յուրաքանչյուր դեպքում քննության է առնվում անվտանգության ապահովման սկզբունքի խիստ պահպանմամբ:

Երկարաժամկետ և ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորությունը ավելի կարևոր է, քան կարճաժամկետ դատապարտվածների համար:

Պատժի կրումից ազատվելու հնարավորությունը դատապարտյալի համար վարքագիծը դրական ուղղությամբ փոխելու և սոցիալական վերաինտեգրումը արդյունավետ հունով տանելու մոտիվացնող պայման է, ինչը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դատապարտյալը **գիտակցված փոխում** է իր վարքագիծը՝ գիտակցելով դրա կարևորությունը:

Պատժի կանխարգելման այն համակարգերը և քրեական արդարադատության քաղաքականությունը, որը անձին դատապարտում է ցմահ ազատազրկման և բացառում ազատ արձակվելու հնարավորությունը, այն դեպքում, երբ վերջինիս ռիսկայնությունը և վտանգավորությունը վերացել է, չի համապատասխանում ոչ դատապարտյալների հետ վարվեցողության սկզբունքներին, ոչ էլ անձին հասարակություն վերաինտեգրելու նպատակին: Հետևաբար օրենքով պետք է նախատեսվի, որ ոչ մի դատապարտյալ չպետք է մոռացության մատնվի: Յուրաքանչյուր դատապարտյալի, հատկապես՝ երկար ժամկետով և ցմահ դատապարտվածի վաղաժամկետ ազատման հարցը պետք է պարբերաբար քննվի:

Ցմահ ազատազրկվածների վաղաժամկետ ազատման հարցի քննության համար կրած պատժի անհրաժեշտ չափը սահմանելիս պետք է ելնել այն ընդունված փաստից, որ երկար ժամկետով պատժի կրումը մեծացնում է պատժի կրման բացասական հետևանքների առաջացման հավանականությունը: Դատապարտյալի անձի զարգացման

¹⁹ Ibid 4



ԻՐԱԿՈՒԷՔԼԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

վարքագծի փոփոխության ուսումնասիրությունը պետք է ավելի վաղ կատարվի, իսկ պատժի կրման վերանայումը քննարկման առարկա դառնա 8-12 տարի ազատազրկման մեջ լինելուց հետո: Եթե ազատման հարցի քննությունը բացասական արդյունքի է հանգում, ապա վերանայումը պետք է ոչ թե ժամանակային մեծ ինտերվալներով իրականացվի, այլ պարբերական բնույթ կրի: Ցմահ ազատազրկվածների պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննելիս ռիսկի գնահատման համար պետք է հիմք ընդունել այն նույն չափանիշները, որոնք գործում են մնացած բոլոր դատապարտյալների համար²⁰:

Ծանր հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատման հնարավորություն

Յուրաքանչյուր դատապարտյալ, ով առողջության հետ կապված խնդիրներ ունի, պետք է սահմանված ստանդարտներին համապատասխան բժշկական օգնություն ստանա: Այն դեպքում, սակայն, երբ հիվանդությունը իր բնույթով ու ծանրությամբ այնպիսին է, որ անհամատեղելի է դառնում պատժի հետագա կրման հետ, պետք է կամ պատժի հետագա կրումից ազատվելու հնարավորություն լինի կամ դատապարտման այլընտրանքային միջոցներ սահմանվեն: Նման մոտեցումը գործում է նաև երկարատև ժամկետով դատապարտվածների նկատմամբ: Ծանր հիվանդությամբ տառապող դատապարտյալների բժշկական օգնություն ստանալու իրավունքը, և հետևաբար նաև բանտից դուրս բուժսպասարկում ու խնամք ստանալու իրավունքը նախատեսված են մի շարք միջազգային փաստաթղթերով: Վերջինների մեջ մտնում են՝ Դատապարտյալների հետ վարվեցողության ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները²¹, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի No. R /93/6 Հանձնարարականը՝ ՄԻԱՎ-ով տառապող դատապարտյալների վաղաժամկետ ազատման վերաբերյալ²², Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի No. R/98/7 հանձնարարականը, որը բուժման նպատակով դատապարտյալներին բանտից դուրս բժշկական օգնություն տրամադրելու ինչպես նաև մինչև նման օգնություն ստանալը բանտում համապատասխան խնամք տրամադրելու պարտականություն է դնում անդամ պետությունների վրա: Նույն հանձնարարականի

²⁰ Council of Europe, European Committee on crime problems, Treatment of long-term prisoners

²¹ United Nations Basic Principles for the Treatment of Prisoners

²² Council of Europe Recommendation No. R (93) 6 of the Committee of Ministers to Member States concerning Prison and Criminological Aspects of the Control of Transmissible Diseases Including AIDS and Related Health Problems in Prisons



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

համաձայն՝ նման դեպքերում պետք է քննարկման դնել նաև հիվանդության հիմքով դատապարտյալին պատժի կրումից վաղաժամկետ ազատման հարցը²³:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի /ՄԻԵԴ/ մոտեցումը ցմահ ազատազրկվածների վերաբերյալ

Ցմահ ազատազրկված անձանց պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննության առարկա է դառնում Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո, որով սահմանված է խոշտանգման, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը: ՄԻԵԴ հիմնական մոտեցումը հանգում է նրան, որ ցմահ ազատազրկվածների պարագայում նույնպես պետք է պատժի կրճատման հնարավորություն լինի, հակառակ դեպքում տեղի կունենա խախտում կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո: Նման հնարավորությունը կյանքի է կոչվում այն դեպքում, երբ համապատասխան մարմինները դատապարտյալի վարքագծում զգալի փոփոխություն են տեսնում և վերախնտեզրման զարգացում արձանագրում:

Միննույն ժամանակ Դատարանը, հաշվի առնելով քրեական արդարադատության հարցում ԵԽ անդամներին տրված հայեցողության սահմանը, նախատեսել է, որ յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում՝ ինչպես և երբ պատժից ազատման հնարավորությունը կիրառել: Այսինքն՝ դատարանի կողմից սահմանված մեկ միասնական մոտեցում չկա պատժից վաղաժամկետ ազատման եղանակի ու նվազագույն ժամկետի վերաբերյալ: Միննույն ժամանակ, երկրների փորձն ու միջազգային ու համեմատական իրավունքի ուսումնասիրությունը թույլ են տվել նշել, որ վաղաժամկետ ազատման հնարավորությունը չի կարող կրած պատժից 25 տարուց ավելի ուշ քննարկվել: Դատապարտյալը պետք է բանտ մտնելուց հետո տեղեկացվի ազատման համար անհրաժեշտ պայմանների ու պարտավորությունների, ինչպես նաև պատժի կրման նվազագույն ժամկետի մասին: Եթե ներպետական օրենսդրությունը որևէ մեխանիզմ կամ հնարավորություն չի նախատեսում վաղաժամկետ ազատման համար, ապա դա հանգեցնում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ անհամապատասխանության²⁴: Դատարանը այդ հարցի առնչությամբ քննված գործերով արձանագրել է, որ պատժից

²³ Council of Europe, Committee of Ministers Recommendation No. R (98) 7 Concerning the Ethical and Organizational Aspects of Health Care in Prisons

²⁴ European Court of Human Rights, *Life Imprisonment*, Factsheet, October 2015



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ազատման հարցը պետք է ոչ միայն դե յուրե նախատեսված լինի, այլ նաև դե ֆակտո կիրառվի, հակառակ դեպքում անձը ազատման հեռանկար չի ունենա²⁵:

Վինտերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով դատարանն արձանագրել է, որ ցմահ դատապարտյալը պետք է պատժից ազատման հեռանկար և պատժի վերանայման հնարավորություն ունենա: Այն դեպքում, երբ իրավասու մարմինն հայեցողություն է տրված ազատման հարցում, և այդ հնարավորությունը հստակ չէ դատապարտյալի համար, կրկին Կոնվենցիայի հետ անհամապատասխանելիության հարց է բարձրանում 3-ր հոդվածի ներքո: Ազատման հեռանկարի բացակայությունը խախտում է արժանապատվությունը հարգելու իրավունքը, քանի որ անձը զրկված է երբևէ ազատություն ստանալու հնարավորությունից: Սա նշանակում է ոչ թե պատժից մեխանիկորեն ազատում, այլ նման հնարավորության նախատեսում: Այնուամենայնիվ, ազատ արձակվելու հարցը որոշվում է՝ դատապարտյալի վարքագիծն ու ռիսկայնության աստիճանը հաշվի առնելով, սակայն ազատ արձակման հեռանկար դատապարտյալը պետք է ունենա: Դատարանը սույն գործով խախտում է արձանագրել, քանի որ ներպետական օրենսդրությունը ցմահ ազատազրկվածի համար պատժի վերանայման հնարավորություն նախատեսել է բացառապես պատժի կրման հետ անհամատեղելի ծանր հիվանդության դեպքում²⁶:

Մեկ այլ գործով Դատարանը նշել է, որ պատժից ազատման վերաբերյալ ներպետական օրենսդրությունը չի սահմանել, թե ինչպիսի չափանիշների հիման վրա կամ ինչ պայմաններում է հնարավոր որոշել կոնկրետ դատապարտյալի ներման խնդրագրի հարցը: Ավելին, ազատման համար իրավասու մարմինները որևէ պարտավորություն չեն ունեցել վաղաժամկետ ազատման համար ներկայացված դիմումների մերժման դեպքում հիմնավորումներ տալ: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ նման կարգավորումն ու իրավիճակը հակասել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածին²⁷:

²⁵ ECHR, *Kafkaris v. Cyprus*, n. 21906/04, paras 98, 104; *Garagin v. Italy*, 2008, *Torkoly v. Hungary*, 2011

²⁶ *Vinter and Others v. the United Kingdom*, n. 66069/09 130/10 3896/10 , 09 July 2013

²⁷ ECHR, *Laszlo Magyar v. Hungary*, no. 73593/10, May 2014, paras 53, 57, 58



ՀՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ցմահ դատապարտյալների խնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում 2018թ. դրությամբ կան 92 ցմահ դատապարտյալներ: 31.12.2018թ. դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող թվով 92 ցմահ ազատազրկման դատապարտված անձանցից 30-ը դատապարտված են եղել մահապատժի²⁸: 2003թ. նախագահի հրամանագրով մահապատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

31.12.2018 թ. դրությամբ թվով 92 ցմահ ազատազրկվածները պատիժ կրում են հետևյալ քրեակատարողական հիմնարկներում՝

- ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում թվով 48 անձ,
- ՀՀ ԱՆ «Երևան-կենտրոն» քրեակատարողական հիմնարկում թվով 2 անձ,
- ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում թվով 4 անձ,
- ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում թվով 3 անձ,
- ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում թվով 35 անձ:

Հայաստանի Հանրապետությունում երկարաժամկետ և ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատիժը կրելու անհատական պլանավորում չի իրականացվում, չեն գնահատվում անձի կարիքներն ու ռիսկերը՝ ի ապահովումն պատժի նպատակների իրականացման:

Դատապարտված անձանց հետ չի տարվում բավարար քանակի և որակի անհատականացված սոցիալ-հոգեբանական, իրավական աշխատանք: Ավելին, օրենսդրական պահանջին համապատասխան՝ ցմահ դատապարտյալները պահվում են որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանցից անջատ, 29 առանձին դեպքերում՝ մեկուսացված, ինչն էլ ավելի է խորացնում նրանց անձնային ու հոգեբանական խնդիրները՝ մեկուսվածություն հասարակությունից, սոցիալական ունակությունների վատթարացում և կորուստ, հոգեկան առողջության խնդիրների զարգացում և այլն:

²⁸ Տվյալները ստացվել են ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության թիվ Ե/10 գրու թյամբ

²⁹ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 68:



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ըստ գործող օրենսդրության նախատեսված են բացառություններ ցմահ դատապարտվածների համար, օրինակ՝ կատարված հանցագործության ծանրության բերումով սահմանափակված է առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձի կարճաժամկետ մեկնման իրավունքը: Ցմահ դատապարտյալների կապը արտաքին աշխարհի հետ նույնպես սահմանափակված է. մասնավորապես վերջիններիս տրամադրվում է տարվա ընթացքում միայն առնվազն վեց կարճատև և երկու երկարատև տեսակցություն³⁰: Ցմահ դատապարտյալների համար նախատեսված այս սահմանափակումը վերանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելու համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ժամկետը կրելուց հետո միայն³¹, այն է՝ 20 տարի անց³²:

Ցմահ դատապարտված անձանց ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու հնարավորությունը ևս ծագում է միայն 20 տարի անց³³, ինչը նույնպես բացասաբար է ազդում ցմահ դատապարտված անձանց շփումների վրա: Ավելին, անհրաժեշտ է փաստել, որ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու պայմանները և հանգամանքները նույնպես սահմանափակում են նման հնարավորությունը, քանի որ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելիս օրենսդրությունը պահանջում է հաշվի առնել դատապարտյալներին անջատ պահելու վերաբերյալ նախատեսված կանոնները (ինչը սահմանափակում է ցմահ դատապարտյալներին որոշակի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց հետ պահելու հնարավորությունը), միաժամանակ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու պայման է անձի դրական վարքագիծը, ինչ պրակտիկայում կամայական գնահատման է ենթարկվում՝ դատապարտյալի վարքագծի գնահատման հստակ և կանխատեսելի չափանիշների բացակայության բերումով:

Ինչ վերաբերում է ցմահ դատապարտված անձանց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի գործարկմանը պրակտիկայում, ապա ՀՀ գործող օրենսդրությամբ նման հնարավորություն նախատեսված է ցմահ դատապարտված անձանց համար, ովքեր փաստացի կրել են 20 տարի ժամկետով ազատագրկումը: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի՝ անձին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը որոշելիս քննարկվում են երկու հիմնական չափանիշներ՝ անձը պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ և դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է: Ընդ

³⁰ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92:

³¹ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92, մաս 2:

³² ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 76, մաս 3, կետ 5:

³³ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 102, մաս 1:



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որում, ՀՀ քրեական օրենսգիրքը նշում է դրանցից յուրաքանչյուրը գնահատող ոչ սահմանափակ հանգամանքներ: Մասնավորապես ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի՝ դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում պատժի կրման ընթացքում խրախուսանքի, կարգապահական տույժի առկայությունը, պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն, պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, կամ եթե չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով, դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

Նույն կերպ, դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում դատապարտյալի տարիքը, դատապարտյալի տարիքը հանցագործություն կատարելու պահին, հանցագործության բնույթը և հանրային վտանգավորությունը, ռեցիդիվի առկայությունը, իր կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, հանցագործությամբ պատճառված վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը կամ պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելը, նրա վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ, որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները, մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին, ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը, սոցիալական միջավայրը, առողջական, այդ թվում՝ հոգեկան առողջության վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և հարկադիր բուժման արդյունքը, դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցն ուսումնասիրելիս դատարանների կողմից շեշտը հիմնականում դրվում է կատարված հանցագործության բնույթին ու վտանգավորության աստիճանին, պատժի կրման ընթացքում ունեցած կարգապահական տույժերին, հնարավոր քաղաքացիական հայցին և այլն: Ավելին, անձի վտանգավորությունը գնահատվում է նախկինում կատարված հանցագործության լույսի ներքո՝ չիրականացնելով անձի կարիքների,



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

վտանգավորության ու հնարավոր ռիսկերի գնահատում կոնկրետ ժամանակահատվածում:

Նմանապես, անձի վարքագծի գնահատման հարցում հաշվի չի առնվում անձի վարքագծի դինամիկ փոփոխությունները, և որպես գնահատման հիմք ընդունվում է անձի կողմից թույլ տրված իրավախախտումների կամ ստացած խրախուսանքների թվային արտահայտումը:

Այդպիսով, անձի կարիքների և ռիսկերի գնահատման և պատժի կրման անհատական պլանների ու դրանց իրականացման գնահատման չափանիշների բացակայության պայմաններում դատարանի կողմից կայացվում են հիմնականում չպատճառաբանված, վերացական հիմնավորումներով որոշումներ: Նման պայմաններում, անձի համար անհասկանալի են մնում պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու պատճառները, ինչպես նաև անկանխատեսելի են գնահատման չափանիշները, որպեսզի անձը հետագայում համապատասխանաբար կարգավորի իր վարքագիծն ու գործողությունները:

Այս է պատճառը, որ միայն 2018թ.-ին է գրանցվել է ցմահ դատապարտյալ անձին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու առաջին դեպքը³⁴: Այդուամենայնիվ, անկախ սպասելիքներից՝ այն չունեցավ նախադեպային նշանակություն այլ ցմահ դատապարտյալների համար:

Անհրաժեշտ է շեշտել, որ ի տարբերություն որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց՝ ցմահ դատապարտված անձանց դեպքում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննարկում նախատեսվում է առավել երկար ժամկետներում: Մասնավորապես ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 116-րդ հոդվածի՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարան ներկայացնելու համաձայնություն չտալու դեպքում դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կարող է կրկին քննարկվել համապատասխան որոշման ընդունումից հետո՝ մեկուկես տարի անց, իսկ դատարանի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը

³⁴Այսօր, Հայաստանում առաջին անգամ ցմահ դատապարտյալը պայմանական ազատ է արձակվել, <https://www.aysor.am/am/news/2018/10/16/%D6%81%D5%B4%D5%A1%D5%B0-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%BF%D5%B5%D5%A1%D5%AC/1478267>



ԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կրկին քննարկվում է վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարի անց³⁵:

Մինչդեռ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց համար նշված ժամկետները հնգակի կարճ են՝ համապատասխանաբար երեք և վեց ամիս³⁶: Օրենսդրական նման կարգավորումն անհիմն է ու լրջորեն սահմանափակում է ցմահ դատապարտված անձանց՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու հնարավորությունները:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտին զուգահեռ օրենսդրությամբ նախատեսված են պատժից ազատման այլ հնարավորություններ ևս: Մասնավորապես, ՀՀ Կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշմամբ սահմանված է կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջական մարմինների բուժման հիմնարկներից օգտվելու վերաբերյալ: Որոշման հավելված 2-ով սահմանված է պատժի կրմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը որոնց առկայության դեպքում ազատազրկված անձը պետք է ազատվի պատժի հետագա կրումից³⁷:

Այս առումով ծանր հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատման հետ կապված՝ ազատազրկված անձանցից ստացված բողոքները հիմնականում կապված են եղել իրականացված հետազոտությունների ու տրված եզրակացությունների մեղմացված լինելու հետ, ինչպես նաև շեշտել են այն հանգամանքը, որ արձանագրված արդյունքները չեն արտացոլում առողջության իրական խնդիրները, ինչով պայմանավորված՝ վերջիններս պատժից չեն ազատվել³⁸:

Մեկ այլ կարևոր խնդիր կապված է այն հանգամանքի հետ, որ ազատազրկված անձանց կողմից ունեցած հիվանդության տեսակները հաճախ չեն համապատասխանում վերը նշված թիվ 825-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկին, ինչի արդյունքում առողջության հետ կապված խնդիր ունեցող անձիք շարունակում են մնալ անազատության մեջ: Սրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ չնայած գոյություն ունեցող բազմաթիվ բողոքներին ու լուրջ հիվանդություններով տառապող ազատազրկված անձանց մեծ թվին, ներառյալ ցմահ ազատազրկվածները, պատժի հետագա կրումից այս օրենսդրական երաշխիքի շնորհիվ ազտավողների թիվը

³⁵ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 116:

³⁶ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 115:

³⁷ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=72111>

³⁸ <http://pmg.am/hy/news/successful-cases/2018-4>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

բավականին փոքր է: 2015 թվականին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկից պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատվել է թվով 1 ցմահ ազատազրկված անձ: 2018 թվականին ՀՀ ԱՆ « Արթիկ» ՔԿՀ-ից պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատվել է 1 ցմահ ազատազրկված անձ³⁹:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կրկնապատկել ՔԿՀ-ներում հոգեբանների և սոցիալական աշխատողների համար հատկացված հաստիքները, նման հաստիքներում ներառել բարձր մասնագիտական կարողություններ և հմտություններ ունեցող անձանց:
- Մշակել դատապարտյալների պատժի կրման պլանավորման արդյունավետ գործիքներ, որոնք կկիրառվեն ՔԿՀ մուտք գործելու առաջին իսկ օրվանից:
- Մշակել կարիքների ու ռիսկերի գնահատման մեխանիզմներ՝ իրատեսական ու ողջամիտ չափանիշների հիման վրա:
- Ներդնել դատապարտյալների վարքի անհրաժեշտ միջամտության գործունեղանակներ, որոնք կկանխեն կրկնահանցագործությունները:
- Օրենսդրական փոփոխությամբ ապահովել ցմահ դատապարտված անձանց համար ուղղիչ հիմնարկի փոփոխության հնարավորությունը առավել վաղ ժամկետում, քան 20 տարին է՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար հիմքեր ստեղծելով փուլային եղանակով հասարակություն վերադառնալու համար:
- Օրենսդրությամբ նախատեսել պատիժը կրելուց որոշակի ժամկետ հետո ցմահ դատապարտյալներին որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց հետ պահելու հնարավորությունը:
- Ցմահ դատապարտյալներին հնարավորություն տալ՝ օգտվելու կարճատև մեկնումների հնարավորությունից:

³⁹ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայությունից ստացված թիվ Ե/10 գրություն



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

- Օրենսդրությամբ սահմանել դատարանի կողմից ցմահ դատապարտյալի պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման հարցի մերժման դեպքում կրկին անգամ վաղաժամկետ ազատման հարցը քննարկելու ավելի վաղ ժամկետ:
- Վերանայել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար օրենսդրորեն նախատեսված չափանիշները, և ապահովել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու արդյունավետ հնարավորությունը պրակտիկայում:
- Վերանայել 26.05.2006 թվականի ՀՀ Կառավարության թիվ 825-Ն որոշումն ու պատժի կրմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը, պրակտիկայում որոշմամբ սահմանված հնարավորություններն ու երաշխիքները դարձնել առավել կիրառելի, և ցմահ ազատազրկված անձանց՝ այս հիմքով ազատվելու հնարավորությունը դարձնել առավել իրատեսական ու արդյունավետ: